ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Անի Գևորգյան, ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ,

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիա, ք. Վիեննա, 2023թ. օգոստոսի 14-ից 18-ը,

3. Հրավիրող կողմը՝ Համաշխարհային բանկ,

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ մասնակցել «Պարտքի կառավարման արդյունավետության գնահատումը պարտքի կառավարիչների համար» թեմայով աշխատաժողովին: Մասնակցությունը պայմանավորված էր աշխատանքի ընթացքում խնդիրներին առաջավոր լուծումներ գտնելու և պարտքի կառավարման կատարողականի բարելավման, ինչպես նաև պարտքի հաշվառման և կառավարման առավել արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման անհրաժեշտությամբ,

5. Քննարկված թեմաները.

1. Պարտքի կառավարման կատարողականի գնահատման մեթոդաբանության ընդհանուր բնութագիրը,
2. Կառավարման և պարտքի ռազմավարությունը, իրավական շրջանակը և կառավարման կառուցվածքը,
3. Պարտքի ռազմավարության մշակումը, պարտքի վերաբերյալ հաշվետվությունը և աուդիտը,
4. Համակարգումը հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության հետ,
5. Փոխառությունների և հարակից ֆինանսավորման վերաբերյալ գործառնությունները,
6. Կանխիկի կառավարումը,
7. Պարտքի հաշվառումը, վճարումը և գործառնական ռիսկերի կառավարումը,
8. Պարտքի կառավարման կատարողականի գնահատման գործընթացը,
9. Պայմանական պարտավորությունների կառավարումը,
10. Բարեփոխումների պլանների նախագծումը և իրականացումը,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովին մասնակցում էին 13 երկրների 26 ներկայացուցիչներ: Աշխատաժողովի ընթացքում Համաշխարհային բանկի ներկայացուցիչները ներկայացրեցին դասախոսություններ պարտքի կառավարման կատարողականի գնահատման մեթոդաբանության վերաբերյալ: Դասընթացները որոշ դեպքերում իրականացվեցին հարցուպատասխանի ռեժիմով: Աշխատաժողովի ընթացքում 8 երկիր (այդ թվում՝ Հայաստանը) ներկայացրեցին գործնականում տվյալ երկրի պարտքի կառավարման վերաբերյալ շնորհանդեսներ: Դասախոսություններից հետո ներկայացվեց խմբային առաջադրանք՝ ներկայացված օրինակի վերաբերյալ պետական պարտքի կառավարման կատարողականը գնահատում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ձեռքբերված գիտելիքներն անմիջական առնչություն ունեն պարտքի կառավարման գործառույթների հետ և կիրառելի են: Համապատասխան մեթոդաբամության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների կիրառումը թույլ կտա բարեփոխումներ իրականացնել կարողությունների և ինստիտուցիոնալ զարգացման շրջանակներում՝ բարելավելով առկա ցուցանիշները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

21.08.2023թ.